ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների /ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների/ ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

«02» դեկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Լևոն Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու /Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ)

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Էդգար Մելքոնյան՝ Դատական դեպարտամենտի արձանագրային վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Արմինե Ալիխանյան՝ Դատական դեպարտամենտի հաշվապահական հաշվառման վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (Գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ)

1. Տեղեկատվություն՝ «ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիրը չստորագրելու, որակավորման և պայմանագրի ապահովումները չներկայացնելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ.

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի 2021թ. նոյեմբերի 10-ի որոշման համաձայն ընտրված մասնակից ճանաչված /հայտարարված/ «ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ-ին 2021թ. նոյեմբերի 16-ին www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով տրամադրվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը (նշված փաստաթղթերը և Համակարգից քաղվածքը կցվում են):

Միաժամանակ 2021թ. նոյեմբերի 16-ին Համակարգի միջոցով հիշյալ մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկվել է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին (պայմանագրի շնորհման ծանուցում), ինչի վերաբերյալ 2021թ. նոյեմբերի 17-ին Դատական դեպարտամենտի (գնահատող հանձնաժողովի քարտուղարի) ddgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին Համակարգից ստացվել է ավտոմատ ծանուցում՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ ներկայացված առաջարկը (պայմանագրի շնորհումը) «ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ-ի կողմից ընդունված լինելու մասին (ddgnumner@mail.ru էլեկտրոնային փոստից քաղվածքը կցվում է): Սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) ՄԱՍ I-ի 9.5-րդ կետով սահմանված ժամկետում՝ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10

աշխատանքային օրվա ընթացքում, «ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ-ն չի ստորագրել պայմանագիրը և Դատական դեպարտամենտ չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև Հրավերի ՄԱՍ Ի-ի 9.5-րդ կետի պահանջները՝ **«ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից**:

Հանձնաժողովը որոշեց՝

-ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն,

-հաստատել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է).

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Լևոն Հովհաննիսյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Էդգար Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Քարտուղար՝ Տիգրան Զեյնալյան

Արուս Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե-9622

«16» նոյեմբերի 2021թ.

«ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՅՈՒ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների /ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների/ ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. նոյեմբերի 10-ի որոշմամբ «ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ-ն ճանաչվել /հայտարարվել/ է ընթացակարգի ընտրված մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ չի կիրառվել:

Կից ուղարկվում է պայմանագրի նախագիծը և առաջարկվում կնքել այն երկու օրինակից և սույն ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1)՝ միաժամանակ ներկայացնելով նաև որակավորման և պայմանագրի ապահովումները՝ Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին /համապատասխանաբար Հավելված 4.2 և Հավելված 5.1/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Առդիր՝14 էջ:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կապ՝. «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06»

ք. Երևան «____» _____ 2021 թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ա. Հարությունյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Յու. Մարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները /ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքները/ (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կարող են կիրառվել նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1 890 771 (մեկ միլիոն ութ հարյուր իննսուն հազար յոթ հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն

[1] *Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
Դատական դեպարտամենտ	***«ՄԱՐՁԱՆԴ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ Արագածոտնի մարզ, գ. Գեղաձոր, 3 փ., 2 տուն
Հ/Հ՝ -	Հ/Հ՝ 220423330079000
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 05012047
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Արագած» մ/ճ
Ղեկավար՝ Ա. Հարությունյան	Տնօրեն՝ Յու. Մարգարյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« » « » 2021 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ /ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ/ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6
	1-1. Շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Ապամոնտաժել պատուհանների վրա տեղադրված օդափոխիչները	հատ	20,000	800,000	16000,000
	Դուռ, պատուհան				
1	Մետալոպլաստե երկշերտ պատուհաններին տեղադրել նոր ապակեփաթեթներ	մ^2	5,600	1000,000	5600,000
2	Պատուհանների փականները փոխարինել բարդ փականներով	հատ	25,000	3000,000	75000,000
3	Պատուհանների ռեզինների փոխարինում	հատ	90,000	700,000	63000,000
4	Պատուհանների բռնակների փոխարինում	հատ	35,000	1000,000	35000,000
5	Պատուհանների մեխանիզմների փոխարինում	հատ	15,000	1500,000	22500,000
6	Դռների վերանորոգում ներառյալ բռնակների, մեխանիզմների և ռեզինների փոխարինում	հատ	4,000	4000,000	16000,000
	ԸՆԴԱՄԵՆԸ				233100,000
	1-2. Էլեկտրամատակարարում				
	1-ին մասնաշենք				
1	Գլխավոր բաշխիչ վահանակ ՕՇ-70	հատ	2,000	50000,000	100000,000
2	Ղեկավարման անջատիչ EL-11E 380/50	լրակ.	1,000	50000,000	50000,000
3	Ապահովիչ F125A	հատ	6,000	7000,000	42000,000
4	Ապահովիչ F50A	հատ	6,000	7000,000	42000,000
5	Ապահովիչ F32A	հատ	6,000	7000,000	42000,000
6	Ապահովիչ F25A	հատ	6,000	7000,000	42000,000
7	Ավտոմատ անջատիչ 3x400	հատ	4,000	8000,000	32000,000
8	Ավտոմատ անջատիչ 3x100	հատ	6,000	8000,000	48000,000
9	Ավտոմատ անջատիչ 3x32	հատ	2,000	7000,000	14000,000
10	Ավտոմատ անջատիչ 3x25	հատ	2,000	7000,000	14000,000
11	Ավտոմատ անջատիչ 3x32	հատ	2,000	7000,000	14000,000
12	Ավտոմատ անջատիչ 3x16	հատ	2,000	70000,000	140000,000
13	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 5x35մմ^2 ВВГ	մ	65,000	3000,000	195000,000
14	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 1x35մմ^2 ВВГ	մ	15,000	3000,000	45000,000
15	Մագնիսական թողարկիչ 630Ա 230Վ	հատ	4,000	7000,000	28000,000
16	Մետաղյա անկյունային 70x70x5մմ	մ	10,000	7000,000	70000,000
17	Մետաղյա գոտի 40x5մմ	մ	25,000	6000,000	150000,000
18	Արտաքին պատին անցքի բացում	տեղ	1,000	8000,000	8000,000
19	Մետաղակն արկղ 1700x800x700	հատ	1,000	35000,000	35000,000
	2-րդ մասնաշենք				
1	Գլխավոր բաշխիչ վահանակ ՕՇ-70	հատ	1,000	40000,000	40000,000
2	Վահանակ ABR 400A լրակազմ	լրակ.	1,000	40000,000	40000,000
3	Ապահովիչ F125A	հատ	3,000	7000,000	21000,000
4	Ապահովիչ F50A	հատ	3,000	7000,000	21000,000
5	Ապահովիչ F32A	հատ	3,000	7000,000	21000,000

6	Ապահովիչ F25A	հատ	3,000	7000,000	21000,000
7	Ավտոմատ անջատիչ 3x100	հատ	2,000	8000,000	16000,000
8	Ավտոմատ անջատիչ 3x32	հատ	2,000	7000,000	14000,000
9	Ավտոմատ անջատիչ 3x25	հատ	2,000	7000,000	14000,000
10	Ավտոմատ անջատիչ 3x32	հատ	2,000	7000,000	14000,000
11	Ավտոմատ անջատիչ 3x16	հատ	2,000	7000,000	14000,000
12	Ուժային անջատիչ ապահովիչներով 380Վ/630A լրակազմ	լրակ.	1,000	65000,000	65000,000
13	Էլ հաշվիչի ապամոնտաժում և պահեստավորում	հատ	1,000	5000,000	5000,000
14	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 1x35մմ^2 ВВГ	մ	25,000	3000,000	75000,000
15	Արտաքին պատին անցքի բացում	տեղ	1,000	8000,000	8000,000
16	Ասֆալտի ծածկույթի երկկողմանի կտրում խրամուղու երկայնքով	մ	6,000	4000,000	24000,000
17	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում հարվածահար մուրճով բարձելով ա/մ և տեղափոխելով թափոնավայր	մ^3	0,160	30000,000	4800,000
18	Խճի նախապատրաստական շերտի իրականացում, h=12սմ հաստությամբ	մ^2	0,720	30000,000	21600,000
19	Խոշորհատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում, h=6սմ հաստությամբ	մ^2	0,720	30000,000	21600,000
20	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում, h=4սմ հաստությամբ	մ^2	0,720	30000,000	21600,000
21	Հողային աշխատանքներ էքսկավատրով III կարգի գրունտներում, կողալիցքով ճանապարհի համար	մ^3	0,150	30000,000	4500,000
22	Խրամուղու հետլիցք կողալիցքի մշակված գրունտներից, տոփանումով	մ^3	0,150	30000,000	4500,000
	ԸՆԴԱՄԵՆԸ				1602600,000
	Ընդհանուրը				**1835700,00**
	Չնախատեսված ծախսեր 3%				**55071,00**
	Ընդամենը				**1890771**
	ԱԱՀ 20%				**0**
	Ընդամենը ամբողջը՝ ներառյալ ԱԱՀ-ն				**1890771**

* Կապալառուն աշխատանքները կատարում է <u>ք.Երևան, Գարեգին Նժդեհ 23 հասցեում</u>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

Հ/Հ՝ -
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ
Հասցե՝ Արագածոտնի մարզ, գ. Գեղաձոր, 3 փ., 2 տուն
Հ/Հ՝ 220423330079000
ՀՎՀՀ՝ 05012047
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Արագած» մ/ճ

Տնօրեն՝ Յու. Մարգարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
« » « » 2021 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով պայմանագրի

ԿԱՊԱԼԻ ՕԲՅԵԿՏԻ, ԴՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ (ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ և ԱՅԼՆ) ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼԻՔ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՍԱՐՔԵՐԻ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

N	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր	Նախագծողի կողմից սահմանված երաշխիքային ժամկետ /տարի/	նյութերի տեխ. բնութագիր
	Դուռ, պատուհան		
1	Մետալոպլաստե երկշերտ պատուհաններին տեղադրել նոր ապակեփաթեթներ	10	ապակե, երկշերտ
2	Պատուհանների փականները փոխարինել բարդ փականներով	10	բարդ փականներ
3	Պատուհանների ռեզինների փոխարինում	5	ռեզիններ
4	Պատուհանների բռնակների փոխարինում	5	բռնակներ մետաղապլաստե
5	Պատուհանների մեխանիզմների փոխարինում	8	մեխանիզմներ
6	Դռների վերանորոգում ներառյալ բռնակների, մեխանիզմների և ռեզինների փոխարինում	8	բռնակներ նիկելե, մեխանիզմներ, ռեզիններ
	Էլեկտրամատակարում		
1	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 5x35մմ^2 ВВГ	20	5x35մմ2 ВВГ
2	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 1x35մմ^2 ВВГ	20	1x35մմ2 ВВГ
3	Մետաղական անկյունակ	20	մետաղյա երկաթե 70x70x5մմ
4	Մետաղական գոտի	20	մետաղյա երկաթե 40x5մմ
5	Մետաղական արկղ	20	մետաղյա երկաթե 1700x800x700

Չափաբաժնի համար	Սարքերի և սարքավորումների						
	ֆիրմային անվանումը	**Ապրանքի անվանումը**	**ապրանքային նշանը**	**մակնիշը**	**արտադրողի անվանումը**	**տեխնիկական բնութագրերը**	**երաշխիքային ժամկետները**
1	**IEK**	**Գլխավոր բաշխիչ վահանակ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**ՕՍՄ-70**	**5 ՏԱՐԻ**
	IEK	**Ղեկավարման անջատիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**EL-11E 380/50**	**3 ՏԱՐԻ**
	IEK	**Ապահովիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**F125A**	**1 ՏԱՐԻ**
	IEK	**Ապահովիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**F50A**	**1 ՏԱՐԻ**
	IEK	**Ապահովիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**F32A**	**1 ՏԱՐԻ**
	IEK	**Ապահովիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**F25A**	**1 ՏԱՐԻ**
	IEK	**Ավտոմատ անջատիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**3x400**	**3 ՏԱՐԻ**
	IEK	**Ավտոմատ անջատիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**3x100**	**3 ՏԱՐԻ**
	IEK	**Ավտոմատ անջատիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**3x32**	**3 ՏԱՐԻ**
	IEK	**Ավտոմատ անջատիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**3x25**	**3 ՏԱՐԻ**
	IEK	**Ավտոմատ անջատիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**3x16**	**3 ՏԱՐԻ**
	IEK	**Մագնիսական թողարկիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**630Ա 230Վ**	**3 ՏԱՐԻ**
	IEK	**Ավտոմատ անջատիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**3x32**	**3 ՏԱՐԻ**
	IEK	**Գլխավոր բաշխիչ վահանակ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**ՕՍՄ-70**	**5 ՏԱՐԻ**
	IEK	**Ապահովիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**F125A**	**1 ՏԱՐԻ**
	IEK	**Ապահովիչ**	**IEK**	**IEK**	**IEK Group**	**F50A**	**1 ՏԱՐԻ**

	IEK	Ապահովիչ	IEK	IEK	IEK Group	F32A	1 ՏԱՐԻ
	IEK	Ապահովիչ	IEK	IEK	IEK Group	F25A	1 ՏԱՐԻ
	IEK	Ավտոմատ անջատիչ	IEK	IEK	IEK Group	3x100	3 ՏԱՐԻ
	IEK	Ավտոմատ անջատիչ	IEK	IEK	IEK Group	3x32	3 ՏԱՐԻ
	IEK	Ավտոմատ անջատիչ	IEK	IEK	IEK Group	3x25	3 ՏԱՐԻ
	IEK	Ավտոմատ անջատիչ	IEK	IEK	IEK Group	3x16	3 ՏԱՐԻ
	IEK	Ավտոմատ անջատիչ	IEK	IEK	IEK Group	3x32	3 ՏԱՐԻ
	IEK	Ուժային անջատիչ ապահովիչներով լրակազմ	IEK	IEK	IEK Group	380Վ/630A	1 ՏԱՐԻ
	IEK	Վահանակ	IEK	IEK	IEK Group	ABR 400A լրակազմ	5 ՏԱՐԻ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

Հ/Հ՝ -
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՄԱՐՁԱՆԴ» ՍՊԸ
Հասցե՝ Արագածոտնի մարզ, գ. Գեղաձոր, 3 փ., 2 տուն
Հ/Հ՝ 220423330079000
ՀՎՀՀ՝ 05012047
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Արագած» մ/ճ

Տնօրեն՝ Յու. Մարգարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » « » 2021 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ /ՀՀ ՎԵՐԱՔՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ/ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում
2	ՕԴԱՓՈԽԻՉՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում
3	ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում
4	ԷԼ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը**	**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օրվա ընթացքում**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

Հ/Հ՝ -
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ
Հասցե՝ Արագածոտնի մարզ, գ. Գեղաձոր, 3 փ., 2 տուն
Հ/Հ՝ 220423330079000
ՀՎՀՀ՝ 05012047
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Արագած» մ/ճ

Տնօրեն՝ Յու. Մարգարյան

/ստորագրություն/
Կ.Տ

*** Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, <<Սկիզբը>> այունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
« » « » 2021 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/533	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ/	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ -
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 4
« » « » 2021 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
« » « » 2021 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

(/ppcm/)

ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06

Սկսած

Մինչև

Նամակի բովանդակություն

ՀՀ	Ծանուցման վերնագիր	Մրցույթի ծածկագիրը
1	Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում պայմանագիր կնքելու առաջարկ	ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06
2	Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրություններ N 4	ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06
3	Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում բանակցությունների ծանուցում	ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06
4	Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրություններ N 2, N 3	ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06
5	Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում անհամապատասխանությունների շտկման ծանուցում	ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06

<< () < () 1 () > () >> ()

Պատվիրատու	Դատական դեպարտամենտ
Մրցույթի ծածկագիր	ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06
Մրցույթի վերնագիր	Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարություն և հրավեր
Ուղարկող	Արուս Խաչատրյան
Ստացող	ՎԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ (Էլ.Փոստ՝ 1VANUSHMARGARYAN1990@MAIL.RU), ՄԱՐՁԱՆԴ ՍՊԸ ՅՈՒՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ (Էլ.Փոստ՝ vahe.mxitaryan.2013@mail.ru), Մարզանդ ՍՊԸ ՄՀ-ին կցագրված բոլոր ՊՊԳՊ օգտվողները
Ամսաթիվ	16/11/2021

Նամակի վերնագիր	Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում պայմանագիր կնքելու առաջարկ
Բովանդակություն	Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում պայմանագիր կնքելու առաջարկ
Կցված փաստաթուղթ	*Paymanagir knqelu arajark-21-06.zip (/ppcm/private/manual-notification/download-file?id=b1fa752c-384a-4a74-8d38-61bbd68692b2&name=Paymanagir knqelu arajark-21-06.zip)*

“IUNETWORKS” © 2015. (http://iunetworks.am)

Срд, 17 Ноя 2021 11:09

Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - Պայմանագրի շնորհումն ընդունվել է - [ՄՀ.7775838]

От: <info@armeps.am>

Кому: info@armeps.am

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարություն և հրավեր ՄՀ համար պայմանագրի շնորհումն ընդունվել է ՅՈՒՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ, Մարզանդ ՍՊԸ(marzand1)ի կողմից:
Reason:
Դիտել պատասխանները՝ http://www.armeps.am/epps/cft/prepareViewCfTWS.do?resourceId=7775838

****

Contract award for the CfT with title Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարություն և հրավեր has been accepted by ՅՈՒՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ, Մարզանդ ՍՊԸ(marzand1).
Reason:
Please visit the following link:
View replies: http://www.armeps.am/epps/cft/prepareViewCfTWS.do?resourceId=7775838

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06»**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների /ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների/ ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Չափաբաժնի համար	**Գնման առարկայի համառոտ նկարագրություն**	**Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում**	**Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/	**Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**
1	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ/	«ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի **<u>4-րդ կետի</u>**	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 9.5-րդ կետով սահմանված ժամկետում «ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ-ն չի ստորագրել պայմանագիրը և Դատական դեպարտամենտ չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ուստի «ՄԱՐԶԱՆԴ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնումների համակարգող Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ **010-511-787**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@mail.ru**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**: